

ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱԽԱԳԾԱՅԻՆ ինստիտուտունիքում

Ա.ԶԱ.Տ-ՄԽՈՑԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԲԻՆԱՑՎԱԾ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ
ՏԵՂԱԿԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Շ. ՏԵՐ-ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՖՆԻՒԱ-ի գազատուրբինային տեղակայումների բաժնի պետ

Ա. ՏԵՐ-ՄԼՐՄՅԱՆ

ՖՆԻՒԱ-ի գազատուրբինային տեղակայումների բաժնի ավագ ինժեներ

Ժամանակակից գիտության և տեխնիկայի խոշոր նվաճում է հանիգասանում նոր շերմային շարժիչ՝ գազային տուրբինի ստեղծումը, որի լայն կիրառությունը թույլ կտա ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերում հասնել զգալի տեխնիկական պրոգրեսի:

Դիտության և տեխնիկայի վերջին նվաճումները մետալուրգիայի, գազադինամիկայի և յուս կից բնագավառներում արտասահմանյան երկրների արդյունաբերությանը թույլ են տվել ստեղծել բավական բարձր տնտեսողականությամբ կոմբինացված գազատուրբինային տեղակայումներ (ԳՏՏ) ստացիոնար, փոխադրովի և տրանսպորտային էներգետիկայի համար:

Ժամանակակից գազատուրբաշինությունը գոտնը նրավում է բացառիկ աճի վիճակում, նա ձեռք է բերվել հետազոտական աշխատանքների լայն զարգացման շնորհիվ, որոնք դրել են ԳՏՏ-ի հետագա կատարելագործման խնդիրը: Արտասահմանում գազատուրբաշինության զարգացման մասին կարելի է դատել գազային տուրբինների արտադրության հիման վրա, որին հասել են երկու խոշոր տուրբինաշխական ֆիրմաներ՝ «Բրուու Բովերի» (Եվելյարիա) և «Ջեներալ-Մուտուս» (ԱՄՆ):

Այսպես, արտադրության մեջ գտնվող «Բրուու Բովերի» ֆիրմայի ստացիոնար տեղակայումների կարողությունը հասնում է ներկայումս մոտ 400000 կվտ: Միայն վերջին ժամանակները ֆիրման ընդունել է մի շարք պատվերներ՝ 12-ից մինչև 27 հազ. կվտ կարողությամբ խոշոր գազատուրբինային տեղակայումներ արտադրելու համար:

«Ջեներալ-Մուտուս» ֆիրման թողարկել է մոտ 100 ագրեգատ, ավելի քան 350 000 կվտ ընդհանուր կարողությամբ: Մինչև վերջին ժամանակները նա արտադրում էր հիմնականում մինչև 6—7 հազ. կվտ կարողությամբ տուրբիններ: Այժմ նա պատրաստում է երկու տուրբին մինչև 16 հազ. կվտ կարողությամբ, օգտագործելով բանեցրած գազերի շերմությունը, որը շատ անգամով բարձրացնում է ողջ ԳՏՏ-ի օգտակար գործողության գործակիցը (օ. գ. գ.):

Մի շարք օտարերկոյա ֆիրմաներ աշխատում են ատոմային կայանների համար ԳՏՏ ստեղծելու վրա: Ներկայումս արդյունահանվող և արտադրության մեջ գտնվող ստացիոնար և փոխադրովի ԳՏՏ-ի ընդհանուր կարողությունը հասնում է 1 մլն. կվտ:

Գաղատուրբինաշինության զարգացման և
ԳՏՏ-ի լայն կիրառության մեծ հեռանկարներ են
բացվել գաղատուրբինային տեղակայումի սխեմա-
յում գազի ազատ-մխոցային գեներատորների կամ,
ինչպես նրանց այլ կերպ անվանում են, ազատ
շարժվող մխոցով մոտոգեներատորների և շար-
ժիչների կիրառման կապակցությամբ, որոնք կա-
րող են գործադրվել ինչպես գազի գեներատորներ,
այնպես էլ դիզել-կոմպրեսորներ:

Ազատ-մխոցային շարժիչների կիրառությունը
ԳՏՏ սխեմայում պայմանավորված է ազատ մխո-
ցային շարժիչ-գեներատորի (ԱՄՇԴ) և գազային
տուրբինի (ԳՏ) սխեմայի հետևյալ առավելու-
թյուններով՝ գաղատուրբինային տեղակայումների
նկատմամբ:

1. Մեկ ագրեգատում (ազատ-մխոցային շար-
ժիչում-գեներատորում) շարժիչի և կոմպրեսորի
միավորումը (ուղղակի գործողության մխոցային
շարժիչի իրագործումը) թույլ է տալիս ստեղծել
չերմաէներգետիկ տեղակայում, որի պատրաստ-
ման վրա զգալիորեն քիչ ($1,5-2$ անգամ) մետաղ
է ծախսվում, և որը գրեթե լիովին ազատված է
թանկարժեք հակաֆրիկցիոն համաձուլվածքների
կիրառությունից:

2. Գազային տուրբինների և սեղմումից բոլն-
կումով ներքին այրման շարժիչների (դիզելների)
հիմնական առավելությունների ամենից ավելի
ուացիոնալ զուգորդության և նրանցից յուրաքան-
չչորդին հատուկ թերությունների վերացման հե-
տեւանքով, ԱՄՇԴ և ԳՏ ունեցող կոմբինացված
տեղակայումը թույլ է տալիս որոշակի պայման-
ներում աշխատանքային պրոցեսը իրագործել մեծ
տնտեսողականությամբ (օ. գ. Հավասար է
41,8 %, առանց տուրբինում բանեցրած գազերի
չերմությունը օգտագործելով): Այդպիսի կոմբի-
նացված չերմառժային տեղակայումի մեջ աշխա-
տանքային գազի ստացումը տեղի է ունենում
շարժիչի գլանում եղած բարձր ճնշման և չերմաս-
տիճանի դեպքում, որոնք անթուլպարելի են սո-
վորական գազային շարժիչների համար: Միևնույն
ժամանակ, գազային տուրբինի առկայության
շնորհիվ սխեմայում տեղի է ունենում լրիվ ըն-
դարձակման չերմադինամիկական ցիկլը, որը շի-
կարող իրագործվել ներքին այրման սովորական
շարժիչներում:

3. Կոմբինացված տեղակայումի բարձր ընդ-
հանուր օ. գ. գ. (41,8 % առանց հեռացող գազե-
րի չերմությունը օգտագործելով) ձեռք է բերվում
գազի համեմատաբար ոչ բարձր ճնշումների դեպ-
քում և տուրբինի առջև աշխատանքային մարմնի
խիստ շափակոր չերմաստիճաններում ($500-600^{\circ}$ C): Դրա հետևանքով գազային տուրբինի
թիակների պատրաստման համար վերանում է
թանկարժեք հատուկ կրակադիմացկուն նյութերի:
կիրառման անհրաժեշտությունը:

4. ԱՄՇԴ-ը հանդիսանում է լիովին հավասա-
րակշուղած մեխանիզմ, որի մեջ բացակայում են
թրթումն ու իներցիոն ուժերը, որոնք հատուկ են
շուտովիկա-շարժաթեսվոր մեխանիզմ ունեցող
շարժիչներին: Դրա շնորհիվ վերանում է հիմքե-
րի և ուժեղացված ենթամոտորային շրջանակների
անհրաժեշտությունը, որը զգալիորեն էժանացնում
է այդպիսի տեղակայումների շինարարությունն ու
շահագործումը:

5. ԱՄՇԴ-ում կարելի է փոփոխել մխոցների
ծայրային դիրքը, նայած մատուցվող վառելա-
նյութի քանակությանը, որը թույլ է տալիս շատ
էֆեկտիվ և տնտեսողական կերպով կարգավորել
կոմպրեսորի միջոցով մատուցվող օդի քանակու-
թյունը: Բացի դրանից, ԱՄՇԴ և ԳՏ ունեցող կոմ-
բինացված տեղակայումի մեջ կարելի է լրացու-
ցիչ կարգավորում կիրառել կոմպրեսորից ուղղա-
կի գազային տուրբինի մեջ օդը տարաթողելու
միջոցով: Այդ ամենը հնարավորություն է տալիս
լայն սահմաններում իրագործել տեղակայումի
կարողության կարգավորումը, առանց նրա տնտե-
սողականությունը զգալիորեն իշեցնելու: Այդ
դրական հատկությունը խիստ տարբերում է ԱՄՇԴ
և ԳՏ ունեցող գաղատուրբինային տեղակայումի
սխեման գաղատուրբինային տեղակայումների
սովորական սխեմաներից, որոնց մեջ կարողու-
թյունների կարգավորումը հանգեցնում է նրանց
տնտեսողականության խիստ իշեցմանը:

6. Շարժիչի կոնստրուկցիայի զգալի պարզու-
թյունը (շուտովիկաշարժաթեսվոր մեխանիզմի
բեռնավորված առանցքակալների բացակայությու-
նը և այլն) և տուրբինի առաջ աշխատանքային
մարմնի համեմատաբար ցածր շերմաստիճանը
թույլ են տալիս ԱՄՇԴ և ԳՏ ունեցող կոմբինաց-
ված գաղատուրբինային տեղակայումի կիրառման

ձամանակ հասնել մոտոռնսուրսի զգալի ավելացման (մինչև 10 000 ժամ):

7. ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված շերմառաժային տեղակայումի ստացիոնար վարիանտի կիրառությունը թույլ է տալիս ավելի ուստի կարգով, աշխատանքային տարածությունների օդագործման իմաստով, տեղավորել նրա առանձին ագրեգատները, քանի որ ԱՄԾԳ-ի և ԳՏ-ի միջև եղած կապը, մեխանիկական փոխանցումների բացակայության հետևանքով, իրագործվում է համապատասխան խողովակաշարերի միջոցով:

8. Քանի որ շարժիչն ունի մխոցի փոփոխական ընթացք, գործարկելիս կարելի է մեծացնել սեղման աստիճանը, որն ապահովում է մեքենայի հուսալի գործարկումը նույնիսկ շրջապատող միջավայրի զգալի ցածր շերմաստիճանի դեպքում:

9. Գազային տուբրինի զարգացրած տեսակարար օգտակար աշխատանքի բարձր արժեքների հետևանքով (1 կգ աշխատանքային գազի աշխատանքը), կոմբինացված տեղակայումի մեջ օդի տեսակարար ծախսը (կարողության մեկ միավորի համար) զգալիորեն ավելի փոքր է, քան սովորական գազատուբրինային տեղակայումներում: Դրա շնորհիվ վերանում է մեծ շափերի գազատար ու օդատար խողովակաշարերի անհրաժեշտությունը:

Սովորական ԳՏՏ-ում տուբրինի հաշվարկային կարողությունը պետք է մի քանի անգամ մեծ լինի այն օգտակար կարողությունից, որ սպառով վերցնում է տուբրինի լիսեռից: Այդ պատճառով նախապես տրված օգտակար կարողության դեպքում հաստատուն ճնշման սովորական տուբրինի գաբարիտները պետք է մեծ լինեն, հետևաբար և զգալիորեն ավելի թանկ, ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված տեղակայումի տուբրինից:

10. Աղատ շարժվող մխոցներ ունեցող շարժիչների համար որպես վառելանյութ կարելի է կիրառել նավթի թորվածքի զանազան էժան ծանր տեսակները (սոլյարային յուղ, մազութ և այլն), իսկ երկֆազ պրոցեսի իրագործման դեպքում նաև տեղական գազանման և պինդ վառելանյութը: Վերջապես, աղատ մխոցային շարժիչը ապագայում կարող է աշխատել նաև միջուկային վառելանյութով:

11. ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված դաշտառավարինային տեղակայումը օժտված է ծնկած լիսեռի պտուտաթիվն արագորեն բարձրացնելու ընդունակությամբ (որում կարող է ըստ կարողության արագորեն մտնում է աշխատանքի նորմալ ռեժիմի մեջ: Տեղակայումը գործարկելու համար տաքացման մեջ ժամանակամիջոց չի պահանջվում:

12. Երբ մեկ կոմբինացված տեղակայումի մեջ միաժամանակ աշխատում են մի քանի ԱՄԾԳ, միանգամայն հնարավոր է գազի առանձին գեներատորների ինքնուրուցյն աշխատանքը, որը ողջ տեղակայումի շահագործումը հուսալի է դարձնում:

13. ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված տեղակայումը, սովորական ԳՏՏ և դիգելների համեմատությամբ, օժտված է համանման շոգեմեքենայի գործարկման ոլորող մոմենտի լավագույն բնութագրով:

14. ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված ԳՏՏ-ում կարելի է ստանալ կարողությունների լայն դիագալոն՝ ունիֆիկացված շափերի և կարողությունների ԱՄԾԳ-ը հասարակ ձեռվ հավաքելու միջոցով:

15. Գազային տուբրինի միջոցով բանեցված գազերում պարունակվող շերմության օգտագործման դեպքում ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված ԳՏՏ-ի օ.գ.գ. կարելի է մեծացնել 20 և ավելի տոկոսներով: 250 ձիռուժ կարողությամբ ԱՄԾԳ և ԳՏ ունեցող փոխադրովի էլեկտրակայանը կարող է տեղադրվել ԳԱԶ-51 բեռնատար ավտոմոբիլում:

Վերջին տասնամյակի ընթացքում արտասահմանյան գիտա-տեխնիկական գրականության տեսությունը խոսում է մոտակա տարիների ընթացքում ԱՄԾԳ և ԳՏ ունեցող կոմբինացված շերմային էլեկտրաէներգետիկ գազատուբրինային տեղակայումների հետազոտությունների զարգացման և արտադրության լայն հեռանկարների մասին:

Միայն բրիտանական մեքենաշինական ցուցահանդեսում 1957 թ. ցուցադրվել են մի ամբողջ շարք աղատ մխոցային շարժիչներ, որոնք արտադրվել են անգլիական խոշոր ֆիրմաների կողմից:

Այսպես, «Բրաշ» ֆիրման ցուցադրել է ԱՄՇԳ-ի համար նախատեսված գազային տուրբինի մակետը: Ներկայում նախագծել և պատրաստել է մի շարք այդպիսի տուրբիններ՝ 1000—10 000 ձիուժ կարողությամբ: Ստեղծվել են 12 շափերի տուրբիններ, ընդ որում ամենամեծ շափերի տուրբինները կարող են ապահովել սինխրոն արագությունը՝ 50—60 հերցի համար, առանց այդպիսի գեղքում սովորական ռեզուցիոն փոխանցում կիրառելու: Գազի ազատ մխոցավոր գեներատորների (մոտոգեներատորների) համար «Բրաշ» ֆիրմայի տուրբինները, աշխատանքի բարենպաստ պայմանների հետևանքով (համեմատաբար ցածր շերմաստիճանով պատրաստի գազ) շատ ընդհանուր բան ունեն շոգետուրբինների հետ և միևնույն ժամանակ օժտված են գազային տուրբինի արժեքավոր հատկություններով:

«Բուզվորտ» ֆիրման ցուցադրել է 360 ձիուժ կարողությամբ գազային տուրբին՝ Մունց կոնստրուկցիայի ազատ-մխոցային մոտոգեներատորի համար:

Ցուցահանդեսում մեծ տեղ են գրավել տարբեր ֆիրմաների կողմից ցուցադրված Պեսկարա-Մունց կոնստրուկցիայի ազատ մխոցային մոտոգեներատորները:

Վերջապես, բրիտանական ցուցահանդեսում ցուցադրվել է ԱՄԳԳ ունեցող գազատուրբինային տեղակայում, որն աշխատում է ատոմային վառելանյութով:

Արտասահմանում գազի ազատ մխոցային գեներատորն առաջին անգամ ստեղծել է ֆրանսիացի ինժեներ Պեսկարան՝ ազատ մխոցային դիզել-կոմպրեսորների զարգացման բազայի վրա: 1939 թ. մինչև 1945 թ. ընկած ժամանակաշրջանում առաջարկվել և փորձարկվել են ազատ-մխոցային գազային գեներատորների զանազան մոդելները լիոնի «Սիդմա» գործարանների էքսպերիմենտալ արհեստանոցներում (Ֆրանսիա): Մոդելներից մեկի կատարելագործման շնորհիվ ստեղծվել է գազի գեներատոր, որ հայտնի է GS—34 մարկայով և լայն կիրառություն ստացել զանազան նշանակություն ունեցող էներգետիկ տեղակայումներում: Այդ ԱՄԳԳ, որ կառուցվել է կոմպրեսորների գլանների ներքին դասավորությամբ սխեմայով, ունի 340 մմ տրամագծի գլան: Եթե գազի ճնշումը 4,1 կգ/սմ² է, նա զարգացնում է 1250

ձիուժ կարողություն: Առաջին փորձնական աեղակայտմը, որ բաղկացած է մի այդպիսի ԱՄԳԳ և տուրբոէլեկտրագեներատորից 600 կվտ կարողությամբ, կառուցվել է ֆրանսիական ուզմա-ծովային նավատորմի պատվերով և հանձնվել շահագործման 1949 թ.:

1956 թ. «Գետավերկեն» ֆիրման (Շվեյցիա) ստեղծել է մի տեղակայում ազատ-մխոցային գազային գեներատորով, որը լոկոմոտիվների համար մխոցների մեջ կապ ունի:

«Զուցեր» ֆիրման (Շվեյցարիա) մշակել է ազատ մխոցային գազի գեներատորների մի քանի կոնստրուկցիաներ՝ գլանների կոմպրեսորային բուֆերների արտաքին դասավորությամբ: Շարժիչի գլանի 250 մմ տրամագիծ և 500 մմ մխոցի ընթացք ունեցող գեներատորի փորձարկման ժամանակ, եթե գազի ճնշումը կազմում է 5 կգ/սմ² և գազի շերմաստիճանը 500° C, տուրբինի առջև ստացվել է 37 % էֆեկտիվ օ.գ.գ. (տուրբինի 85 % օ.գ.գ. դեղքում):

Անգլիայի գազային տուրբինների ազգային ինստիտուտն արդեն վաղուց աշխատում է գազատուրբինային արդյունաբերության պրոլեմային հարցերի լուծման վրա: Բացի ավիացիոն գազային տուրբինների գծով տարվող հիմնական աշխատանքներից, ինստիտուտում հետազոտություններ են կատարվում ԱՄՇԳ ունեցող շերմաստիճային (ստացիոնար և փոխադրովի) և նավային գազատուրբինային տեղակայումների գծով: Ինստիտուտի հետազոտական աշխատանքների մասին կարելի է դատել նրա տրամադրության տակ գտնվող սարքավորման հիման վրա: Այսպես, օրինակ, կոմպրեսորային սարքավորումը բաղկացած է մի շարք կոմպրեսորներից՝ 30 հազ. ձիուժ գումարային կարողությամբ: Նրանց թվումն են գտնվում 2 առանցքային կոմպրեսորներ, յուրաքանչյուրը 8850 ձիուժ կարողությամբ: Նրանց յուրաքանչյուրն ապահովում է օդի 27,2 կգ/վրկ ծախսը 5,26 կգ/սմ² ճնշման դեպքում: Կոմպրեսորներին լրացրելով կերպով օդ մատուցելու համար ծառայում են 5 մետրա-մետր նինա շարժիչները, որոնցից յուրաքանչյուրից վերցվում է 5,25 կգ/վրկ օդ 3,1 կգ/սմ² ճնշման տակ, և Պարսոնի գազային տուրբինան, որից վերցվում է 11,4 կգ/վրկ օդ 3,15 կգ/սմ² ճնշման տակ, օդի

տաքացման համար նախատեսված է էլեկտրաչեռուցիչ՝ 1500 կՎտ կարողությամբ:

Բացի դրանից, Անգլիայում, ծովային վարչության նախաձեռնությամբ, նրա տեխնիկական լաբորատորիայում «Ալեն Մունց» ֆիրմայի հետ միասին նախագծվել է ազատ միոցային գազային գեներատորի նմուշը այն նույն սխեմայով, ինչ և ֆրանսիական GS-34, բայց ավելի արագ ընթացքով: Դրա շնորհիվ, ստեղծվել են ԱՄԳԳ-ի մոդելների GS-75 և US-75 մարկաները և նրանց ձևափոխությունը: GS-75 և US-75 մոդելները փորձարկվել և հանձնվել են սերիական արտադրության համար:

1957 թ. կոնդոնի արդյունաբերական ցուցահանդեսում ցուցադրվել է օժանդակ նավային տեղակայում 200 կՎտ կարողությամբ: Նա բաղկացած է GS-75 ԱՄԳԳ-ից և յոթաստիճանի տուրբինից, որն աշխատում է էլեկտրագեներատորով:


Ամերիկայի Միացյալ Նահանգները շատ առաջ են անցել բոլոր կապիտալիստական երկրներից՝ ԱՄԳԳ-ի արտադրության և կիրառության գծով: ԱՄՆ-ում ԱՄԳԳ-ի հետազոտությամբ և արտադրությամբ զբաղվում են «Ձեռներալ-Մոտորս», «Պրատտ և Վիտսիեր», «Բալդին-Լիմա-Համիլտոն» և «Կուակեր-Բեսսիմեր» ֆիրմաները:

Մինչև վերջին ժամանակները իրագործված նավային տեղակայումներից ամենահզորը հանդիսանում է ԱՄՆ-ում մոդելնացված «Լիբերտի-Վիլլիամ Պատերսոն» տիպի նավը, որն ունի 6000 ձիուժ կարողություն: Նավն ունի ԱՄԳԳ-ի և ԳՏ-ի սխեմայի գազատուրբինային տեղակայում GMR-14 տիպի վեց ԱՄԳԳ և երկու տուրբին, որոնք աշխատում են մեկ լիսեռով ուղղուկառորդի միջոցով:

1951 թ. ԱՄՆ-ում կառուցվել է ԱՄԳԳ ունեցող բեռնատար ավտոմոբիլ: 1956 թ. կատարվել են ԽՄ-500 էքսպիրիմենտալ ավտոմոբիլի փորձարկումները: Ավտոմոբիլն ունի 250 ձիուժ կարողությամբ ԱՄԳԳ, նա կառուցվել է «Ձեռներալ-Մոտորս» ֆիրմայի կողմէց: Սկսվել է փորձարկվել նույնպես «Մերկուրի» մարկայի ավտոմոբիլը, որն ունի ԱՄԳԳ՝ մոտ 150 ձիուժ կարողությամբ և կառուցվել է «Ֆորդ» ֆիրմայի կողմէց: Նույն ֆիրման կառուցել է ԱՄԳԳ ունեցող տրակտոր,

50 ձիուժ կարողությամբ (նկ. 1): Գեներատորը տեղավորված է տրակտորի ետևի անհիվում:

Լոկոմոտիվներում (գազատուրբինաքարշերում) ԱՄԳԳ-ի կիրառության օրինակ է հանդիսանում «Միենո» ֆրանսիական ֆիրմայի փորձնական լոկոմոտիվը: ԱՄԳԳ և ԳՏ ունեցող տեղակայումը, որ պատրաստվել է մեկ GS-34 գազի գեներատորով, ունի 1000 ձիուժ կարողություն:



Նկ. 1. «Ֆորդ» ֆիրմայի (ԱՄՆ) տրակտոր, որն ունի ԱՄԳԳ, 50 ձիուժ կարողություն:


Նկատի ունենալով հայրենական գիտա-տեխնիկական մտքի և արդյունաբերության որոշ հետամացությունը, տրանսպորտի և էներգետիկայի կարիքների համար ԱՄԳԳ ունեցող ԳՏՏ-ի ստեղծման և արտադրության բնագավառում, միջոցներ են ձեռք առնվում ԳՏՏ-ի գծով գիտատեխնիկական աշխատանքները շեշտակի զարգացնելու և մոտակա 2—3 տարիներին նյանց տարրեր նշանակություն ունեցող փորձնական նմուշները ստեղծելու համար:

Վերադաս օրգանների ցուցումների համաձայն, 1957 թ. Հայաստանում, ՍՍՌՄ Պետպլանի էլեկտրատեխնիկական արդյունաբերության Համամիութենական գիտա-հետազոտական ինստիտուտի նախաձեռնությամբ, Վ. Ի. Լենինի անվան Հայկական էլեկտրամեքենաշինական գործարանին կից ֆիլիալում ստեղծվել է գազատուրբինային տեղակայումների հատուկ բաժին (ԳՏՏԲ): Բաժնի խնդիրն է հետազոտել և նախագծել ստացիոնար և փոխադրովի վարիանտների ԱՄԳԳ և ԳՏ ունեցող գազատուրբինային տեղակայումները, ինչպես հատուկ կիրառման, այնպես էլ ՍՍՌՄ ծոլովդական տնտեսության զանազան բնագավառներում օգտագործելու համար:

ՍՍՌՄ-ում ազատ-միոցային գազային շարժչով և գազային տուրբինով կոմբինացված գա-

լատուրբինային տեղակայումի գազափարն ու սկզբունքային սխեման առաջին անգամ 1956 թ. տվել են պրոֆ. Վ. Կ. Կոշկինը և տեխն. գիտ. թեկնածու Կ. Ն. Մկրտչյանը:

1957 թ. ՖնիԱԱ-ի գազատուրբինային տեղակայումների բաժնի աշխատողները պրոֆ. Վ. Կ. Կոշկինի և Կ. Ն. Մկրտչյանի կոմսուլտացիայով մեծածավալ աշխատանք են կատարել ազատ մխոցային շարժիչով գազատուրբինային տեղակայումների սխեմաների վերլուծման գծով: Ստեղծագործական որոնումների շնորհիվ պարզվել է, որ ազատ մխոցային շարժիչները կարող են օգտագործվել իբրև սկզբնական շարժիչ գազատուրբինային տեղակայումներում երկու, սկզբունքային տարբեր վարիանտներում.



Նկ. 2. ԱՄՇԳ ունեցող կոմբինացված գազատուրբինային տեղակայումի սխեմա:

1. Ազատ մխոցային շարժիչ-կոմպրեսոր՝ ԱՄՇԿ կոմպրեսոր-ռեգեներատոր-գազային տուրբինի սխեմայում (նկ. 2):


2. Ազատ մխոցային շարժիչ-գազի-գեներատոր՝ ԱՄՇԳ (ԱՄՇԳ) գազի գեներատոր-գազային տուրբին սխեմայում (նկ. 3):

Օգտագործելով կենտողտնտիւրհի գործարանի ՀԿԲ տեխնիկական օգնությունն ու կոմսուլտացիան՝ ՖնիԱԱ-ի գազատուրբինային տեղակայումների բաժնը վերջացրել և երևանի կոմպրեսորների գործարանին է հանձնել ցածր ճնշման ազատ մխոցային դիզել-կոմպրեսորի նախագիծը:

Այս դիզել-կոմպրեսորն արդեն 1959 թ. վեր-

շում կփոխարինի դործարանի կողմից տրամդրովով ՎՈՒ 3/8 մխոցային կոմպրեսորին:

Ազատ մխոցային դիզել-կոմպրեսորի առավելությունները կոմպրեսորների գործարանի կողմից արտադրվող ՎՈՒ 3/8 կոմպրեսորի համեմատությամբ ակնառու կերպով ցույց են տրված № 1 աղյուսակում:



Նկ. 3. Ունիֆիկացված կարողության ԱՄՇԳ-ի կոմպլեկտ ունեցող կոմբինացված ունիվերսալ շերմակելեկտրական գազատուրբինային տեղակայում:

Բացի 1-ին աղյուսակում բերված առավելություններից, երևանի կոմպրեսորների գործարանում աշատ-մխոցային դիզել-կոմպրեսորների արմատավորումը՝ թողարկվող ՎՈՒ 3/8 փոխարեն, պայմանավորված է հետևյալ նախադրյալներով:

1. Վերանում է Սովետական Միության մյուս քաղաքներից Հայաստան էլեկտրական շարժիչների ներմուծման անհրաժեշտությունը:

2. Դիզել-կոմպրեսորի մեծ ընդունակությունը՝ ծնկաձև լիսենի պտույտների թիվն արագորեն բարձրացնելու համար (դիզել-կոմպրեսորի շահագործումը՝ առանց ցանցի էլեկտրաէներգիայով սնվելու):

Այսպիսով, արդեն 1957 թ. վերջում գազատուրբինային տեղակայումների բաժինը մշակել էր ազատ մխոցային շարժիչի պատրաստման, ինչպես կոմպրեսորային, այնպես էլ գեներա-

տորային վարիանտների գաղատուրբինալին տեղակայումի սկզբնքային սխեման։ ԱՄԳԴ և ԴՏ ունեցող ԴՏՏ-ի սխեմայի հիմնական առավելությունը հանդիսանում է տուրբինի միջոցով բանեցված գազերում պարունակվող շերմության օգտագործումը շերմաֆիկացման համար։ Վերջինս զգալիորեն բարձրացնում է ողջ տեղակայումի օ.գ.գ. և այն դարձնում է ունիվերսալ ինչպես էլեկտրական էներգիայի, այնպես էլ շերմության ստացման համար։

Աղյուսակ 1

№ Բ/Կ	Բնութագիր	Դիտել	ՎՈՒ 3/8
		Կոմպլեսոր	Կոմպլեսոր
1.	Արտագրողականություն	4. մ ³ /րոպե	3 մ ³ /րոպե
2.	Օդի ճնշումը	7 կգ/սմ ²	8 կգ/սմ ²
3.	Բնդիմանուր կշիռ	545 կգ	1300 կգ
4.	Կարուղություն ինդիկատորային	55 ձիուժ	28 կվտ
5.	Վառելանյութի ծախս ինդիկատորային	144 գ/ձիուժ ժամ	—
6.	Տեսակարար կշիռ	10 կգ/ձիուժ	34,2 կգ/ձիուժ
7.	Գարարիտներ՝ երկարություն	2000 մմ	2025 մմ
	լայնություն	775 մմ	1340 մմ
	բարձրություն	600 մմ	1235 մմ
8.	Ցիլինդրայինություն	800 ց/ըստե	960 ց/ըստե

Հայէլեկտրագործարանի կողմից թողարկվող ԺԷՄ-60 տիպի փոխադրովի էլեկտրակայանի (շարժիչ ԿԴՄ-46) ԱՄԳԴ և ԴՏ ունեցող շերմա-էլեկտրաչներգետիկ գաղատուրբինալին տեղակայումի համեմատական տեխնիկա-տնտեսական վերլուծումը, որ բերված է 2-րդ աղյուսակում, ակնառու կերպով ցուց է տվել գաղատուրբինալին տեղակայումների բաժնի կողմից առաջարկած սխեմայի առավելությունը։

Ինչպիսի՞ն են այն հիմնական նախադրյալները, որոնք պայմանավորում են Հայաստանում գաղատուրբոշինության զարգացման հեռանկարը։

Փոխադրովի էլեկտրակայանների թողարկման գծով գլխավորը հանդիսանում է Հայէլեկտրագործարանը։ Մինչև այսօր էլ շարժիչները արտադրվում են Սովետական Միության զանազան քա-

ղաքներում (Չելյաբինսկ, Մուալինգրադ և այլն) և ներմուծվում Հայաստան, որտեղ նրանք կոմպլեկտավորվում են էլեկտրագեներատորների և վահանների հետ, իսկ այնուհետև ուղարկվում սպառովին։ Այդ ավելորդ փոխադրումները թանկացնում են փոխադրովի էլեկտրակայանը։ Գաղատուրբինալին տեղակայումների արտադրության կենտրոնացումը երկանի էլեկտրամեքենաշինական, կոմպրեսորների և միքրօ հիդրոտուրբինների գործարաններում լիովին կվերացնի

Աղյուսակ 2

№ Բ/Կ	Բնութագիր	ԱՄԳԴ-ՔՏ	ԺԷՄ-60 (շարժիչ ԿԴՄ-46)
		ունեցող ԴՏՏ	գործառություն
1.	Տեղակայումի կարուղությունը	200 կվտ	55 կվտ
2.	Դիտել-գեներատորի կարուղությունը	382 ձիուժ	90 ձիուժ
3.	Վառելանյութի ժախսը (ինդիկատ.)	142 գ/ձիուժ-ժամ	180 գ/ձիուժ-ժամ
4.	Դիտել-գեներատորի կուշիք	2000 կգ	2100 կգ
5.	Շարժիչի տեսակարար կշիռը	5,25 կգ/ձիուժ	22,2 կգ/ձիուժ
6.	Ամբողջ տեղակայումի կշիռը	3600 կգ	3250 կգ
7.	Տեղակայումի տեսակարար կշիռը	12,8 կգ/ձիուժ	13,5 կգ/ձիուժ
8.	Ցիլինդրայինություն	1150 ց/ըստե	1000 պլտ/ըստե
9.	Տեղակայումի օ. գ. գ.	0,40	0,24
10.	Տեղակայումի օ. գ. գ. (շերմաֆիկացմանը)	0,45	—
11.	Գարարիտներ՝ երկարություն	2200 մմ	3135 մմ
	լայնություն	800 մմ	1010 մմ
	բարձրություն	1300 մմ	2040 մմ

30000 հատ դիկելների տրանսպորտային փոխադրումները։

Դիգելգեներատորային էլեկտրակայանների փոխարեն, ավելի տնտեսողական գաղատուրբինային էլեկտրակայանների արտադրության հեռանկարի կապակցությամբ, նպատակահարմար է Հայաստանում կազմակերպել կայանների ամբողջ կոմպլեկտի արտադրությունը Հայէլեկտրագործա-

բանի (սրպես գլխավոր) փոքր հեղուտութիւնների և Կոմպրեսորների գործարանների բազայի վրա:

Արդեն մշակվել է փորձարկման ստենդի և լաբորատորիայի նախագիծը՝ թողարկման համար նախատեսված դիզել-կոմպրեսորների հետազոտության և վերջնամշակման գծով, հավաքվել է ներմուծական ունիկալ լաբորատորիական սարքավորում, ինչպես նաև մշակվում են փորձարկումների մեթոդներն ու ծրագիրը:

Դազատուրթինային տեղակայումների բաժինը միաժամանակ մշակում է ազատ միոցային գաղային գեներատորի գազատուրթինային տեղակայումի սխեմայի հիմնական ագրեգատի տեխնիկա-

աշխատանքային նախագիծը: Մշակվում է ստենդների նախագիծը՝ ինչպես գազատուրթինային տեղակայումի առանձին հանգույցների, այնպես էլ ամբողջությամբ վերցրած տեղակայումի հետազոտության գծով:

Այդ ամենը հնարավորություն է տալիս ենթադրելու մեր ուսապուրիկայում տեխնիկայի և մեկ առաջավոր ճյուղի՝ գազատուրթաշինության գարգացման հնարավորությունների մասին, որը գըտնըվում է բուռն պրոգրեսի ստադիայում և որի արտադրանքին են սպասում երկրի ժողովրդական տնտեսության հարակից շատ ճյուղերը:

ԺՈՂՏՆՏԽՈՐՀԻ ՀԱՆՔԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՐՎՈՂ ԼԵՌՆԱ-ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ

Գ. ԼՈՒՍԻՆՅԱՆ

«Արմգիպրոցվետմետ»-ի լեռնային բաժենի պետ

Ո. ՏՐԱՌՈՒԹՅԵՆ

«Արմգիպրոցվետմետ»-ի լեռնային բաժենի գլխավոր մասնագետ

Հայաստանում գունավոր մետաղների արդյունահանման անընդհատ աճը տեղի է ունենում ինչպես նոր հանքարանների և բացահանքերի շինարարության, այնպես էլ արտադրական կարողությունների լավագույն օգտագործման, արտադրության մեքենալացման ու տեխնոլոգիական պրոցեսների բարելավման հաշվին:

Հանքարանային շինարարության հետ միաժամանակ, լեռնային աշխատանքների ճակատը ընդուրակելու նպատակով, օգտակար հանածոների արդյունահանման համար անընդհատ բացվում են նոր հորիզոններ և ընդարձակվում են աշխատանքները գործող հորիզոնների թվերում:

Այս առնչությամբ կարեոր գործոն է զանազան տեսակի լեռնային հիմնական փորվածքների ժամանակին կատարումը, որ պայմաններ է ստեղծում պետական պլանի կատարման համար:

Գունավոր մետաղների հանքավայրերի տեղադրությունը լեռնա-երկրաբանական պայմաններին և տեղանքի լեռնային ուղիերին համապատասխան,

ստորերկրյա եղանակով լեռնային աշխատանքներ կատարող Հայաստանի հանքարաններում սահմանվել է հանքանութերի տեղափոխումների համար հիմնական բովանդակների միջոցով բացման տիպային սխեմա, որոշ դեպքերում օժանդակ նշանակություն ունեցող կույր հանքահորերի ավելացմամբ: Այդ տիպի փորվածքները ժամանակին կատարելուց զգակի չափով կախված է լեռնային ձեռնարկությունների հետագա աշխատանքի հաջողությունը:

Ժողովածությունի հանքարաններում մինչև այժմ կատարված այդ տիպի փորվածքների բնորոշներկայացուցիչները և նրանց կատարման արագությունը ցույց են տրված հետևյալ աղյուսակում:

Առանց զգակի սխալանքների կարելի է ընդունել, որ անցած ժամանակաշրջանում լեռնային հիմնական փորվածքների կատարման միջին արագությունը կազմում է մեկ ամսում հորիզոնական ուղղությամբ 30—40 գ.մ. (գֆամետր), ուղ-